ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Վ. Հ. ՅԱԿՈԲ Վ՚Ը ՏԻՐՈՅԵԱՆԻ

(Ծն. Կարին 1863 Ապր. 23 — † Պուտաբեշտ 1933 Յուլ. 29)

Այս երկրորդ զոհն էր որ տարաւ մեռնող տարին Մխիթարայ տունէն։ Հանգուցեալը — մկրտութեան անուամբ Մկրտիչ — կը վերաբերի ընտանիքի մը որ իրմէ զատ դեռ ուրիշ երեք անձեր ալ նուիրած է Աստուծոյ։ Եւ ստուգիւ իր երէց եղբայրն էր Ուխտիս միաբան Հ. Աթանաս Վ. († 1926) և Վիեննայի Հայրերէն՝ Հ. Անտոն վրդ. († 1931) և երէց քոյրը՝ միանձնուհի Անարատ Յղութեան կարգէն՝ Քոյր Սանդուխտ։

Մկրտիչ 12 ամեայ Ս. Ղազար կը մտնէ 1875ին. 1879ին կը սքեմաւորի կոչուելով Յակոբ. 1881ին Ուխտով կ՚անդամակցի Միաբանութեանս, և հուսկ 1884ի Զատկին (Ապրիլ 13) քահանայ կը ձեռնադրուի։

Այդ տարիէն կը սկսի իր գործունէութիւնը միաբանական կեանքին մէջ։ Եւ նախ իբր ուսուցիչ թուաբանութեան և պատմութեան՝ իր նախասիրած նիւթերուն՝ կը դասախօսէ վանքի փոքրիկներուն։ 1888ին կը մտնէ Մ. Ռ. Վարժարան որպէս հսկողապետ և ուսուցիչ. 1889ին կ՚անցնի Թրանսիլուանիա՝ Եղիսաբեթուպոլիս, ուր իրեն բնակակից կ՚ունենայ Վիեննայի Մխիթ. Հարց ապագայ Արք. Աբբահայր Հ. Գրիգոր Վ. Գովրիկեան։ 1892ին Տրապիզոնի մեր վարժարանին տեսչի օգնական կը կարգուի և երկու տարի վերջ, 1894ին, արդէն տեսչութեան կը բարձրանայ, շարունակելով այդ փափուկ պաշտօնը դժուարին տարիներ, 1895ի տխուր դէպքերուն՝ մինչեւ 1903. ապա կը կոչուի Պոլիս նոյն տեսչական պաշտօնով նախ ի Բերա 1903–7, և ապա ի Քաղկեդոն 1907–1909, և վերջին թուականէս մինչեւ 1913 կը մնայ հոն որպէս գործակալ։ Հազիւ տարի մը դարձեալ Թրանսիլուանիա կեցած, կը կոչուի վանք 1913ին և յետ տարի մը վանքի աշակերտաց վերակացուի պաշտօնին՝ կ՚անցնի Մ. Ռ. վարժարանի մէջ աշխատելու։ 1916ին կ՚ըլլայ անդամ Ուխտիս Վարչութեան, յետոյ վանահայր 1916–17։ 1920–22 կը վարէ ի Կ. Պոլիս Բենեդիկտոս ԺԵ. հայ որբանոցի տեսչութիւնը, և Զմիւռնիոյ աղէտին աշնան կը փոխադրէ զայն Վենետկոյ մօտ Ֆիեսսոյ տ՚Արթիքոյ, 1923ին անցընելով զայն Միլան՝ մինչեւ 1924։ 1925–1929ին վանական զանազան զբաղումներէ յետոյ այս երրորդ անգամ Պուտաբեշտ կը ղրկուի տեղւոյն հայ ժողովուրդին հոգեւոր հովիւ, և հոն է որ յետ ծանր հիւանդութեան մը կնքեց իր բազմավաստակ կեանքը։

Այսքան շարժուն և ծանր պաշտօններու մէջ լուսահոգին միշտ հետամուտ էր ուսման, որուն ապացոյց՝ թողած է կարեւոր դասագրքեր «Պատմութիւն Ընդհ. ազգաց», «Ուսումնական հաւաքածոյք» և «Ուսումն բնական և բնաբանական գիտութեանց», «Արջառաբուծութիւն», «Հաւաբուծութիւն», «Ճագարաբուծութիւն», «Բերականութիւն հայոց աշխ. լեզուի, Ա. Բ. տարիներ»։

Թարգմանաբար՝ տուած է Թատերական Գրադարանին թ. 13 «Որդիական սէր» և «Երկու աղաւնեակք». թ. 20. «Փոքրիկ ստախօսը». թ. 22. «Պանտալէոնի ճաշը»։

Վերջին տարիներուս, 1928–1934, ինք էր որ յաջողութեամբ յօրինեց վանքիս Օրացոյցը։

Իր մահը իր միաբանակիցներէն զատ խոցեց այն ամէնքը որ իրեն աշակերտած են մեր վարժարաններուն մէջ և վայելած իր դաստիարակի անխոնջ ջանքերն և հոգածութիւնը։ Այդ պաշտօնին բերումն ի մանկութենէ ցոյց տուած էր։ Իր սիրական զբաղանքն էր դասախօսութիւն, ապրիլ տղոց մէջ և տղոց համար. նուիրուիլ վարժարանին ներքին և արտաքին փայլին՝ ի գործ դնելով իր բարոյական ու շինարարական բոլոր ձիրքերը։

Իր հոգեկիցները, հեռաւոր ու մօտաւոր սաները կը մաղթեն իրեն սրտագին՝ լսել փրկչական քաղցր կոչը. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»։

ԽՄԲ.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԴՈՒՐԵԱՆ ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱ. — *Հայոց ոիկ կրօնք կամ Հայկական դիցաբանութիւն.* (Դուրեան մանդրն. թ. 3. Ամբողջ. երկեր). էջ 159. Տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1933։ Գինը՝ 2 շիլին կամ 10 ֆրանք։

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ Բարթողիմէոս Ծ. վրդ. Թագաճեանի։ Պատմեց՝ Բարթ. Ծ. վրդ. գրի առաւ՝ վաղամեռիկ Վահէ Մխալեան. էջ 334. Տպ. Ս. Յակ. Երուսաղէմ. 1933։ Գինը՝ 3 շիլին կամ 15 ֆրանք։

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ՔՀՆՅ. — *Վիրակայաբանութիւն Յովհաննու Պարտիզակցւոյ, և պատմութիւն հիմնարկութեան Պարտիզակի և շինութեան եկեղեցւոյ և վարժարանի.* էջ 103. Տպ. Ս. Յակ. Երուսաղէմ. 1933։

ՊՕՂՈՍԵԱՆ ՅՈՎՀ. — *Արդի Հայաստանը.* (*Մեծագիր, երկսիւն*). էջ 111. Տպ. «Սահակ-Մեսրոպ», Գահիրէ, 1933։ Գինը՝ 12 եգ. դհ. կամ 12 ֆրանք ֆ. կամ 50 սենթ։

ՆԱՐԳՈՒՆԻ ՇԱՒԱՐՇ. — *Մեղեդիներ, վեղեդիներ...* (Հէքեաթ և բանաստեղծութիւն). Մատենաշար «Յառաջ» թ. 1։ էջ 220. Տպ. Փարիզ, 1933։ Գինը՝ 15 ֆրանք։

ՊԱՐՍԱՄԵԱՆ ՄԿՐՏԻՉ. — *Շաւարշ Նարգունի.* (*Կապոյտ տետրակներ*). էջ 46. Տպ. Տէր-Յակոբեան, Փարիզ, 1933։ Գինը՝ 5 ֆրանք։

Մ. և Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ. — *Կեանք և Արուեստ.* Տարեգիրք, 1934, Դ. տարի. էջ 160. Տպ. Փարիզ։ Գինը՝ 25 ֆր.։

ՎԷՄ. — *Հանդէս մշակոյթի և պատմութեան.* (*Խմբագրութեամբ Ս. Վրացեանի*). թ. 1. Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1933. էջ 160+16։

ՄԵՀԵԱՆ Կ. — *Առուր - Նագիր - Արալ* (Նայիրեան հէքեաթ). էջ 24. Մանչր. «Մասիս». թ. 1. Տպ. «Մասիս», Սոֆիա, 1933։

ԹԻՕԼԻՕԼԵԱՆ ՄԻՆԱՍ. — *Վահան Թեքեան.* էջ 30. Տպ. Պէճիտեան. Սմիրնա. 1933։ Գինը՝ 15 զրուշ. Արտասահման՝ 2 ֆր.։

ՊՕՂԻԿԵԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՔՀՆՅ. — *Ծառի աղչիկը. վէպիկ գաւառային իրական կեանքէ.* էջ 76. Հալէպ, 1931։ Գինը՝ 10 ֆր.։

ՊՈՏՈՒՐԵԱՆ Հ. ՄԿՐՏԻՉ. — *Կարմիր ղուսիկ. նորավէպեր.* (*գրուագներ ազգ. կեանքէ*). Բ. տպ. Ֆրումոսա, 1933։ Գինը՝ 7 ֆր.։

ԳԱԲԱՄԱՃԵԱՆ ՍԻՄՈՆ. — *Գրպանի տարեցոյց* 1934. ԺԵ տարի. էջ 222. Տպ. «Սէլամէթ» Դ. Յովհաննէսեան. Կ. Պոլիս 1933։ Գինը՝ 8 ֆր.։

ԱՄԻՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ. *Յօր. ի Հ. Պետրոս Վ.է Քսաւ. Լերկարի։ Թարգմ. լատ.է Գրիգոր Ծ. Վ. Աբեգեան.* էջ 71։ Տպ. «Լիբանան», Պէյրութ, 1926։

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ. — *Վարդանանք. ողբերգ.* 5 *արար.* էջ 76. Պէյրութ, 1933։ Գինը՝ 5 ֆր. կամ Ե. Դ.

ԶԱՐԴԱՐԵԱՆ ՎԱՀԱՆ. — *Յիշատակարան,* Բ. հատ. թ. 18–19, Նշանաւոր Ազգայինք. – թ. 20, Հայրապետութիւն Հայոց. – թ. 21, Նշանաւոր Ազգայինք Զ. – Գ. հատոր։ Տպ. Յ. Փափազեան, Գահիրէ, 1933։

ՍՈՒԼԹ Մ. — *Բարի լոյս. Մանկավարժական ընթերցարան. Ա. տարի.* էջ 96։ Տպ. Յ. Աբրահամեան, Կ. Պոլիս, 1933։ Գինը՝ 30 զր.։

ԱՂԱԹՕՆ Ե. — *Յորևնի մշակութիւն. գործնական հողագործութիւն.* էջ 244. (Նիս). Տպ. Տէր-Յակոբեան, Փարիզ, 1933։ Զրի։

ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ. — *Արեւ - Անձրեւ. քերթուածներ* (1930–1932). էջ 95։ Տպ. «Համազգային», Պէյրութ, 1933։ Գինը՝ 15 ֆր.։

ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՔՀՆՅ. — *Բառարան Պարսկերէն - Հայերէն.* էջ 788. (Ջուզա - Սպահան)։ Տպ. «Փարոս», Թէհրան, 1933։

ԱՃԷՄԵԱՆ ՀԱՅԿ. — «*Մասիս*» *օրացոյց* (*պատի*). 1933. ԺԱ. տարի. Թաւրիզ։

ԲԱՍՄԱՃԵԱՆ Կ. Յ. — *Հայերէն ոյծանագրութիւնք Անւոյ, Բագնայրի և Մարմաշիկոյ. տեղւոյն վրայ հաւաքեց և հրատարակեց հանդերձ ֆրանսերէն թարգմանութեամբ.* էջ 246։ Արտատպ. *թերթէն «Revue de l'Orient Chrétien»* (1920–1930). Տպ. Firmin-Didot & C.ie 1931։ Գինը՝ 200 ֆր.։

ՎԷՀԱԿՐՕՆ ՀՐԱՆՏ (Հ. ԱԼԱՏԻՆ). — *Նոր Լիբանիա. քերթուածներ.* էջ 83. — *Երգեր Տանդէի ժողովրդի* (*թարգմանութիւն*). էջ 60։ Տպ. Գահիրէ, 1933։

ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐԲԵՊՍ. (ՍԻՒՐՄԷԵԱՆ). — *Նկարագիր Օշին բազաւորի ձեռագիր ժամագիրքին,* 1319. Հալէպի Ս. Քառասնից եկեղեցւոյ ձեռագիրներէն. Յաջող. Ն. Ս. Օծ. Տ. Բարգէն Կաթողիկոսի։

ԿՈՃԻԿԵԱՆ ՅԱԿՈԲ. — *Եզովբոսքն Մխիթարայ.* էջ 119. Գոլէճ մատենասը, Հալէպ, 1931։ Գինը՝ 5 ֆր. կամ 50 սենթ։

Bronisława Wójcik-Keuprulian. — Ormianie Polscy. էջ 39. Lwów, 1933։

digitised by A.R.A.R.@